«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի վավերացման մասին» օրենքի նախագծի քննարկումն անցկացնել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածների համաձայն՝

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի վավերացման մասին» օրենքի նախագծի քննարկման տևողությունը սահմանել մինչև 3 ժամ՝ հետևյալ տարբերությամբ՝ հիմնական զեկուցողին հատկացնել մինչև 30 րոպե, ինչպես նաև չսահմանափակել հիմնական զեկուցողին տրվող հարցերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

5 դեկտեմբերի 2017 թվական

ԱԺՈ – 093 - Լ